ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ, ք. Երևան 0037
Ազատության պող. 1/21, բն. 23
Հեռ. 374 10 25 15 75
Info-epf@epfound.am; www.epfarmenia.am

**Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում Ոստիկանության կամ Միգրացիայի և քաղաքացիության կամ Փրկարար ծառայության ոլորտներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ (4.5-5 էջ)**

ՀՀ կառավարության 23 ապրիլի 2020 թվականի N 638-Լ որոշմամբ ընդունվել էր ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին որոշումը: Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 2-րդ գլխի 3-րդ գործողության համաձայն նախատեսվում էր ձևավորել նոր նախարարություն՝ Ոստիկանության և Միգրացիայի ծառայությունների հիմքով: 2022 թ. դեկտեմբերի 30-ին ստեղծվեց Ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ ՆԳՆ): Կառավարության կարգի և գործունեության մասին ՀՀ օրենքի հավելվածի 6.1-րդ մասով սահմանվում է ՆԳՆ-ին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, որոնք ներառում են հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանության իրականացումը, մարդու անվտանգության, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության, հանցանքների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, հայտնաբերման, խափանման և բացահայտման, հետախուզվող անձանց և տրանսպորտային միջոցների հայտնաբերման, ճանապարհային երթևեկության անվտանգության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների պահպանման ապահովման, միգրացիոն գործընթացների կառավարման, համակարգման և իրավիճակի մոնիտորինգի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման, և մի շարք այլ ոլորտներ:

Այսպիսով, ՆԳՆ ենթակա մարմիններն են Ոստիկանությունը, Փրկարար ծառայությունը և Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը:

2021 թվականից ներդրվեց Պարեկային ծառայությունը: Ոստիկանության խնդիրներն իրականացնելիս, պարեկային ծառայությունը՝

1. ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, հասարակական անվտանգությունը, այդ թվում՝ ջրային ավազաններում և առափնյա հատվածներում և ճանապարհային երթևեկության անվտանգությունը,

2. իր իրավասության սահմաններում՝ հասարակական վայրերում հայտնաբերում, կանխում, խափանում, բացահայտում է հանցագործությունները,
3. ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կատարվող դատավարական գործողությունների և դրանց մասնակցող անձանց անվտանգությունը, այդ թվում հանցագործության դեպքի վայրի պահպանությունը,
4. իր իրավասության սահմաններում հասարակական վայրերում կանխում, հայտնաբերում, խափանում է ոստիկանության քննությանը ենթակա վարչական իրավախախտումները (այսուհետ՝ վարչական իրավախախտում) և կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ[1]:

ՀՀ կառավարությունը 15 նոյեմբերի 2024 թվականի N 1803-Լ որոշմամբ հաստատեց Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունը և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Ռազմավարության 2024-2026թթ. գործողությունների ծրագիր): Ռազմավարության 2024-2026 թթ. գործողությունների ծրագրով ի թիվս այլ գործողությունների կարևոր ենք համարում, որ նախատեսվում է Ոստիկանության համակարգում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդմանն ուղղված գործողություններ՝ ՆԳՆ հակակոռուպցիոն ծրագրի հաստատում, Ոստիկանության ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմի ներդնում, Ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնների հաստատում, դրանց կիրառման գործիքակազմի հզորացում:

Բացի այդ հասցեագրվում են բազմաթիվ այլ առանցքային ուղղություններ, ինչպիսիք են ոստիկանության կառուցվածքի և ֆունկցիոնալի ավարտական տեսքի ապահովումը, աշխատատեղերի համար նորացված նկարագրի սահմանումը, ոստիկանության արտաքին տեսքի նկարագրին միասնական տեսքի բերումը, ենթակառուցվածքի, տեխնիկական հագեցվածության լավարկումը, նախարարության և ոստիկանության կապի ամրապնդումը և այլն:

**Մարդու իրավունքներին վերաբերող հարցեր**

Մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը, ի թիվս այլ հարցերի կապված է ոստիկանության գվարդիայի ստեղծման հետ:

2024 թ. հոկտեմբերի 24-ին ընդունվեց Ոստիկանության գվարդիայի մասին օրենքը: . Ոստիկանության գվարդիայի խնդիրներն են՝

1. հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը,

[1] Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրք, մաս 3

2. պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանությունը, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը,
3. ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը,
4. հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը,
5. քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը[2]:

Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս ոստիկանության գվարդիան լիազորված է իրականացնելու պարեկապահակետային ծառայություն հասարակական վայրերում (փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում, երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում, ընտրական տեղամասերում և այլն), ապահովելու հանրային միջոցառումների (հավաքների, երթերի, մարզական ու մշակութային միջոցառումների, ընտրությունների և այլն) բնականոն ընթացքը, պաշտպանելու դրանց մասնակիցների իրավունքները և իրավաչափ շահերը, իրականացնելու «Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված ոստիկանության պարտականությունները և այլ լիազորություններ[3]: Գվարդիայի մասին օրենքը, ի թիվս այլ հարցերի, նախատեսում է ուժային միջոցների գործադրման իրավաչափության ընդհանուր պայմանները[4], ուժային միջոցների գործադրման տիրույթում գտնվող անձանց իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիքները[5]:

Գվարդիայի մասին օրենքը մշակելիս հաշվի է առնվել «Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ վճռի կատարումը: Օրենքի նախագծի հիմնավորումներում նշվում էր, որ օրենքի ընդունումը կնպաստի քաղաքացիների՝ հավաքներ անցկացնելու իրավունքի առավել արդյունավետ իրացմանը, ինչպես նաև հավաքների մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման ռիսկերի չեզոքացմանը: Ի հավելումն, օրենքի ընդունումը պայմանավորված է նրանով, որ ներկայումս ոստիկանության զորքերի խնդիրները, գործունեության իրավական հիմքերն ու սկզբունքներն առավելապես կանոնակարգված են «Ոստիկանության զորքերի մասին» օրենքով, իսկ «Պաշտպանության մասին» օրենքը ոստիկանության զորքերը դասում է «այլ զորքերի» թվին, ինչի ուժով ոստիկանության զորքերի ղեկավարման և կառավարման գործառույթները խաղաղ ժամանակ օրենքով սահմանված կարգով իրականացնում է

[2] Ոստիկանության գվարդիայի մասին օրենք, հոդված 3
[3] Նույն տեղում, հոդված 8
[4] Նույն տեղում, հոդված 19
[5] Նույն տեղում, հոդված 24

լիազոր մարմինը՝ ներքին գործերի նախարարությունը, իսկ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ ոստիկանության զորքերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո: Այլ զորքերի մեջ ներառվելու հետևանքով ոստիկանության զորքերի վրա տարածվում են նաև ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի և ՀՀ զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի դրույթները: Այս ամենից հետևում է, որ ինչպես ոստիկանության զորքերը, այնպես էլ դրանց ծառայողներն ունեն երկակի կարգավիճակ, հետևաբար, այս ծառայությանը բնորոշ է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության գործառույթների զուգակցումը: Նման հայեցակարգը ու կառուցակարգը չեն բխում ոստիկանության ընդհանուր խնդիրներից: Այսպիսով, այս օրենքի կարևորագույն արդյունքն այն է, որ ոստիկանության ուժերը դադարում են մասամբ համարվել զինված ուժերի բաղկացուցիչ մաս:

**Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելում**

Խոշտանգումներից զերծ լինելու իրավունքը համարվում է բացարձակ իրավունք, ինչը նշանակում է, որ ոչ մի դեպքում պետությունը չի կարող սահմանափակել այս իրավունքը: Միջազգայնորեն սահմանված խոշտանգման բացարձակ արգելքը պահանջում է, որ պետությունը ձեռնարկի անհրաժեշտ, բավարար և պատշաճ քայլեր՝ խոշտանգման դեպքերին համարժեք արձագանքելու, արդյունավետ քննության արդյունքում մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև խոշտանգումները կանխարգելելու ուղղությամբ:

Ոստիկանության բաժիններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը նվազեցնելու նպատակով ՀՀ կառավարության 26.12.2019 թ. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշման շրջանակներում Ոստիկանության թվով 21 ստորաբաժանումներում՝ մուտքերին և ելքերին, տեղադրվել են տեսահսկման համակարգեր և համակցվել գերատեսչական ցանցին:

ՀՀ ոստիկանության պետի 25.07.2022 թ. թիվ 26-Լ հրամանով[6] սահմանվում է մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումներում տեղադրված տեսագրող համակարգերի տեխնիկական բնութագրերը, տեսագրությունների պահպանման, օգտագործման կարգը, ինչպես նաև տեսագրմանն առցանց հետևելու, տեսագրություններին հասանելիություն ունեցող ոստիկանության ծառայողների շրջանակը:

Ռազմավարության 2024-2026 թթ.գործողությունների ծրագրով նախատեսվում են ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման, վատ վերաբերմունքի

---

[6] https://www.police.am/resources/police/uploads/files/protocols/5d0264e809761897ca102c3ce0f21d34.pdf

կանխարգելման ուղղությամբ գործողություններ: Նախատեսվում է Ոստիկանության բոլոր ստորաբաժանումները փուլային սկզբունքով զինել միասնական տեսահսկման համակարգով, որը պետք է լինի կենտրոնացված, կառավարվի մեկ կետից՝ բացառելով առանձին ստորաբաժանումների կողմից տեսահսկման համակարգի կառավարման հնարավորությունը: Այս ոլորտին վերաբերող այլ գործողությունները ներառում են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ամբողջությամբ նոր օրենքի մշակումը, ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերի արձանագրման մեխանիզմի ներդնումը՝ Ստամբուլյան արձանագրությանը համահունչ, Ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի գործունեության վերայանված կարգի ամբողջական կիրառման ապահովում և այլն: